

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀԵԳՆԱԿԱՆ ՀՆՉԵՐԱՆՔԸ ԴԱՐԱՔԱԴԻ ԲԱՐՔԱՌԻ ԴԱՐՉՎԱԾՆԵՐՈՒՄ

Կախված հաղորդման նպատակից՝ խոսողը դիմում է արտահայտման տարբեր եղանակների, որոնք կոչված են խոսողի հոգում արթնացնելու զանազան հույզեր: Խոսք կազմող միավորների՝ նախադասությունների տարբեր ձևերի, ինչպես նաև նրանց արտահայտության զանազան հնչերանգների համար ընդհանուրն այն է, որ նպատակի իրականացումը կապված է ոչ թե բառի կամ բառակապակցության յուրահատուկ գործածության, այլ ամբողջ նախադասության կառուցվածքի, ավելի ճիշտ՝ մտքի արտահայտման հատուկ եղանակի հետ:

Հաղորդակցման ընթացքում մեծ է հարցական նախադասությունների դերը, որոնք առանձնանում են ոչ միայն ձևավորման, այլև իմաստային դրսևորումների բազմազանությամբ:

Հարցումը իր դրսևորման ողջ բազմազանությամբ արտահայտվել է նաև դարձվածներում: Հարցական դարձվածների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ ունեն բացառապես նախադասությունների կառուցվածք: Այն բայական դարձվածները, որոնք ոչ հարցական կիրառություն ունեն, բայց այս կամ այն խոսքային միջավայրի պահանջով կարող են ձևավորվել իբրև հարցական, ստանում են ստորոգում և դառնում դարձված-նախադասություններ:

Բարբառի հարցական դարձվածներն ունեն հետևյալ տեսակները.

1. Ընդհանրական կիրառություն ունեցող դարձվածներ, որոնք կարող են ստանալ նոր հարցական ձևավորում: Մյուս հարցական դարձվածներից ունենալով քանակային գերակշռություն՝ այս դարձվածները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով: Նախ՝ դրանք ունեն հարացույցային հարուստ ձևեր, ինչպես՝ *անումը յեր ա՞ իլալ, անումը յեր ա՞ իննան, անումը յեր իլա՞վ, անումը յեր կի՞նի* և այլն: Երկրորդ՝ հայտնի է, որ «հարցումը համընկնում է նախադասության տրամաբանական շեշտի հետ. այն դառնում է տրամաբանական շեշտի դրսևորման ձև և հաճախ դրվում է ստորոգյալի վրա»¹: Իսկ տրամաբանական շեշտի տեղափոխության պատճառով հարցում կարող են արտահայտել նախադասության տարբեր անդամներ: Մինչդեռ քննարկվող արգի հարցական դարձվածները, որքան էլ հարացույցային բազմազան ձևեր ընդունեն, ունեն հարցման մեկ կրող, այն է՝ ստորոգյալը:

2. Ընդհանրական կիրառություն ունեցող դարձվածներից հարցական ձևավորումով յուրահատուկ իմաստ ստացած հարցական դարձվածներ: Այսպես՝ *արագ ըս տը՛խալ* նշանակում է «քեզ թվացել է», *արագ ը՛ս տը՛խալ* «ի՞նչ ես ասում, հո՞ չես գժվել»: Այս կարգի որոշ դարձվածներ նույն իմաստն են արտահայտում թե՛ ընդհանրական, թե՛ հարցական կիրառությամբ, ինչպես՝ *աշխարքըս մօրէիս կէրալ ա* (*), *աշխարքըս մին կըրպէտալ ծասկած ա* (*), *ի(մ) մար ինձ չօլէն դուզումն ա* (*) *պէրալ*:

Մի շարք դրական-հարցական հնչերանգով դարձվածների իմաստը նույնանում է նրանց ժխտական կառուցվածքի արտահայտած իմաստին՝ *կօռ ը՛ս ըրալ//կօռ չըս ըրալ* (ոչինչ չես արել), *գյօռըս ը՛մ տըննական//գյօռըս չըմ տըննական* (ինձ համար չեմ անում, ինձ պետք չէ), *կապէկըս(տ) մաչին ք՛էցալ ա**/*կապէկըս(տ) մաչին ք՛էցալ չի* (դրամական ոչ մի ներդրում չունեմ//չունես):

3. Միայն հարցական ձևավորում ունեցող դարձվածներ, որոնք մյուսներից տարբերվում են իրենց իմաստային բազմազանությամբ, տարբեր է նաև նրանց հարցադրման նպատակը:

Միայն հարցական ձևավորում ունեցող որոշ դարձվածներ դրական-հարցական ձևավորումով ժխտական իմաստ են արտահայտում: Օրինակ՝ *ճարը հի՞նչ* (այլ ելք չունի), *հու կըճի՞դա հուր դարդ* (ոչ մեկը մյուսի դարդը չի իմանա), *էջը հի՞նչ ա՞՞ գ՛ուդում մօշը հի՞նչ ա՞՞* (ինչ-որ բան ըստ արժանվույն չի գնահատվում) և այլն:

Հարցական դարձվածների մեծագույն մասում հարցումը ունի ճարտասանական բնույթ: Գիտենք, որ «ճարտասանական հարցը կառուցվածքային տեսակետից ունի մի առանձնահատկություն. հաստատական նախադասություններով արտահայտվում է մտքի ժխտում, իսկ ժխտական նախադասություններով՝ հաստատում²»: Մինչդեռ հարցական դարձվածներում վերաիմաստավորման պատճառով նշված առանձնահատկությունը կարող է նաև չարտահայտվել, օրինակ՝ *հի՞նչ մօ՛խըր ածիմ կըլխես // հի՞նչ վա՞յ տամ կըլխես* (ասում են, երբ փորձանք է պատահում), *անումը հի՞նչ տի՛նի՛նք՞* (ինչպե՞ս պատճառաբանենք) և այլն: Բացի այդ, եթե ընդհանրապես ճարտասանական հարցը ձևականորեն է միայն հարց, որին պատասխան տալ պետք չէ, ապա կան հարցական դարձվածներ, որոնք պատասխան են ակնկալում, ինչպես՝ *հի՞նչ մա՛նի օնիս* (ի՞նչ խնդիր ունես), *հի՞նչ խա՞բար ա* (1. ի՞նչ է պատահել, 2. չափազանց է), *ախճիճ՞ ը՛ս, թա տըղա՞* (գործը հաջո՞ղ է, թե՞ անհաջող), *աղըն ա՞՞ պակաս, թա մա՛ղը* (ի՞նչ խնդիր, հոգս, կարիք ունի), *Անի յա՞, թա չա՛նի* (չե՞ն է, թե՞ ավերակ) և այլն:

Միայն հարցական ձևավորում ունեցող դարձվածների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ նրանք ունեն քարացած ձևավորում,

ստորոգյալները հանդես են գալիս մեկական ժամանակներով (հազվադեպ կարող են մեկից ավելի ժամանակներով հանդես գալ՝ *հու վա՞ զ՛ուդում հուր դարդ, հու կրճ՛ի՞դա հուր դարդ* և այլն): Այս խմբի դարձվածների հարցական երանգը պայմանավորված է հարցական դերանուններով, որոնք առկա են համարյա բոլոր դարձվածներում, ինչպես՝ *ընժ՛խը հինչ ա՞* (չի կարող առարկել), *հինչ ա՞նիմ* (ինձ չի վերաբերում), *չի հետաքրքրում*), *հինչ մօ՞խեր ածիմ կըլխես* և այլն:

Որպես Ղարաբաղի բարբառի հարցական դարձվածներին բնորոշ կառուցվածք՝ կարելի է նշել միաժամանակ հարց ու պատասխան պարունակող դարձվածներ: Օրինակ՝ *Ճարըն նա՞ղը ծուվարան* (ուրիշ ճար չունի), *քօռը հինչ կօ՞գի՝ երկու աշկ, են էլ պըլօզ-պլօզ||կյօղը հինչ-կօ՞գի՝ մըթեն քըշեր* (մեկի ուզածը հենց դա է) և այլն: Եթե զրական հայերենի հարցական դարձվածները պարզ կառուցվածք ունեն (կան բացառություններ՝ *ի՞նչ ես կորցրել, ինչի՞՞ ման գալիս*), ապա բարդ կառուցվածք ունեցող հարցական դարձված-նախադասությունները բարբառում շատ են՝ *դուշ ըմ պրիըլական, ջըմդաքու յըրա պեց թօ՞ղիմ* (աշխատանքս պետք է ըստ արժանվույն գնահատվի), *ժօրուն հըրցըրեն քու հար հու վա՞, ասից՝ ի(մ) մար ծիմ ա* (հարցին պատասխանելիս նախ և առաջ իրենց ձեռնտու փաստն են մատնանշում), *հինչ ա՞նիմ ըշխարքես լինօթունը, վեր վը՛ննէրես նը՛դ տը՛դ ա* (ինձ հետաքրքրում է միայն սեփական բարօրությունը), *ժառը կըտրալ ըս, էլ հօր ը՞ս ասում, թա ծըտէրը հօր ը՞ն* (երբ մեղքը դու ես գործել, ինչու՞ ես զարմանում հետևանքների վրա), *կըլօխըն ասից՝ ա վը՛ննը, շընուրիակալ չը՞ս, վեր ք՛էզ Շուշի չըմ դարկում* (եթե խելոք դատես, չես պատժվի) և այլն: Ինչպես նկատելի է՝ բերված օրինակներից, հարցական հնչերանգ կարող են ունենալ ինչպես բարդ նախադասության մեկ բաղադրիչը, այնպես էլ բոլոր բաղադրիչ նախադասությունները:

Յեզմանքը ոճական այն հնարքն է, երբ բառերն ու կապակցությունները գործածվում են իրենց իմաստներին լիովին հակառակ նշանակություններով: Գեղարվեստական խոսքում հեզմանքի դրսևորման միջոցները շատ ավելի բազմազան են, քան դարձվածներում: Դարձվածներում հանդիպում ենք սովորական հեզմանքի, երբ «ինքնաբանորեն դրական գաղափարի բառը կամ արտահայտությունը գործածվում է բացասական, ժխտական նշանակությամբ»³: Օրինակ՝ *կըլօխը յը՛դուտ-մը՛դրուտ անէլ* (1. մեկի կամ ինքն իր համար ոչինչ չանել, 2. փորձանք բերել), *կըլօխըն ի վեր ածէլ* (նույն նշանակությամբ), *են դօլը տես անէլ* (նույն նշանակությամբ), *յերէ բաղեն խընծօրը/զուլը // յերէ արտեն գարդան // Սանթաշուվեն տըղան // Կուտուզօվեն թօնը* (անհիմն իրեն երևակայող մարդ) և այլն:

Կան դարձվածներ, որոնք հեզնական հնչերանգով արտահայտում են մի, սովորական հնչերանգով՝ հակառակ իմաստը, ինչպես *աշկըս(տ) լուս* (1. ասվում է ուրախալի լուր հաղորդելիս կամ ուրախալի դեպքի առթիվ շնորհավորելիս, 2. ասվում է ոչ հաճելի բան լսելիս, տեսնելիս կամ պատահելիս), *մերակ ինձ 11 բախտավար կըլիս տըված* (1. ասվում է երջանիկ, բախտավոր վիճակը շեշտելիս, 2. ասվում է դժբախտությունը, փորձանքը շեշտելիս), իսկ *ընդրա / ըստրա մըտէք'* (ասվում է մեկին, որը ուժից վեր գործ է ձեռնարկում կամ մեծ-մեծ խոսում է) նախադասությունը դարձված է միայն հեզնանքի շնորհիվ:

Այսպիսով՝ Ղարաբաղի բարբառի հարցական և հեզնական դարձվածները իրենց բազմազան դրսևորումներով մեկ անգամ ևս բացահայտում են ժողովրդական լեզվի հարստությունը, ժողովրդական մտածողության ինքնատիպությունն ու նրա դրսևորման առանձնահատկությունը:

¹ Տե՛ս *Ս. Աբրահամյան*, Գայոց լեզու. Շարահյուսություն, Երևան, 2004, էջ 82

² Տե՛ս *Պ. Պողոսյան*, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1991 թ, հ. 2, էջ 17

³ Տե՛ս նույնը, էջ 68